

թիւններ, քննադատութիւններ կատարուելով հանդերձ և ոչ մէկ զոյգն ակնարկութիւն անդամ Տերտուզիանոսի ընթիցողածքին»։ Գինասեր Յօգուածագրին յօդուածէն այսչափ երկայն հատուած մէջ բերինք, որպէս զի խնդիրը լու պարզօրի. մեր յաջորդ յօդուածին մէջ անշուշտ պիտի ներուի մեզի Գեր. Դուրեանի՝ Տերտուզիանոսէն առած՝ այս փաստին վրայ՝ մեզ կարեւոր երեւցած խորհրդարանութիւնները ընելու. — Գ. Ոմանք ալ ընդհակառակն, հայկական եկեղեցւոյ կախումը հաւաստելու համար՝ չափազանց մանրացուցով զիտեր են նախնի աւանգութիւնը։

Բայց, ինչպէս որ եկեղեցւոյ մը անկախութեան կարծեաց զէմ պատերազմելու համար՝ ամէն պատմական և պատկառելի հաստատեք ձեր կերպով մերժելն՝ անիրաւել է ընդդէմ պատմութեան, սոյնպէս նաեւ նոյն անկախութեան կարծիքը հաստատելու համար՝ զիմելն հաւաստի պատմութենէ օտար տեղերու, և փաստեր ի մէջ բերելն հակառակ հին համազգային և տիեզերական կանոնական իրաւանց, աստուածաբանական սկզբանց՝ և վերաբերել աւանգութեան և պատմութեան փափուկ բերքը։

Սակայն թուի թէ, հակառակ բոլոր վերոյիշելոց, ճշդիւ որոշելու ենք հետեւեալ երկու խնդիրները, այսինքն ա. Հայկական եկեղեցւոյ բացարձակ անկախութիւնը. — բ. Թէ արդեօք յետ ՍՍ. Թաղի և Բարթոլոմէայ առաքելական բարոզութեանց՝ Հայաստանի մէջ տեւեց աւետարանական լուսող շտապիւն մինչև ի Ս. Լուսաւորիչ մեր եկեղեցական անընդհատ նուիրակութեամբ։ — Եւ այս կրկին խնդրոց մասին զիտելու է՝ որ որչափ եկեղեցւոյ մը բացարձակ անկախութեան խնդիրն զրեթէ սոսկ կանոնական իրաւանց և աստուածաբանական, միով բանի՝ կրօնական խնդիր մ'է, այնչափ ալ՝ մինչև ցՄուրքն Գրիգոր Լուսաւորիչ անընդհատ նուիրակութեամբ խնդիրն է զուստ սոսկ պատմական։

Բայանի է՝ թէ խնդրոյս այս կրկնակի տեսութեան առաջին մասին կրօնական քննութեանը՝ չեն հանդուրժեր Բագրատիկի ուսումնական էջերն. ուստի ներուի մեզ, ներկայ

յօդուածիս վերնագրին հաւատարիմ մնալով՝ սուղ ակնարկ մը ձգել խնդրոյս պատմական մասին վրայ, փափաքելով ցուցնել՝ որ տրամաբանական օրինաց հակառակ է եկեղեցւոյ մը բացարձակ անկախութիւնը մերժելու կամ հաստատելու համար՝ զոչնչ ուրիշ հաւաստի պատմական կամ զվթ հաստատուն աւանդական ճշմարտութիւններ, որպիսի է և այն՝ զոր յաջորդ յօդուածով պիտի ջանանք գոնէ լուսաբանել։

Շարաշարելի Է. Ս. ՍԱՐԵԱՆ



Է. Ա. Կ. ԲԱԳՐԱՏՈՒՆԸ

Ե Ի

Հ Ո Մ Ե Ր Ի

ԻԼԻԱԿԱՆԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Բագրատիկի Թունուարի պրակին մէջ ակնարկ մը տալով Է. Ա. Կ. Բագրատունւոյն կենաց ու գործոց վրայ, իլիականի թարգմանութեան մասին՝ յանդգնելով ըսած էի, թէ «գուցէ քան զքնազիրն անգամ կը գերազանցէ իր ճարտար պէսպիսութեամբ», և այլն, և ուրիշ աղթի կը թողօրի՝ ըսածս օրինակներով ցուցնելու. ներկայ յօդուածովս ահա պիտի ջանամ խոստումս կատարելու։ Բայց զեւ իլիականի թարգմանութեան մէջ չմտած, պատշաճ կը համարիմ՝ իբր լրացուցիչ Թունուարի Ալկնարիկին՝ աւելցնել մի քանի տեղեկութիւններ եւս՝ որոնք չէին յիշուած հնա՛ն։

Բագրատունւոյն այրած գործերն յիշելու ստեն¹, յիշած էի անոր ցան «ընդ կորուստ

1. Հմտ. Բագր. 1900 էջ 23, ժան.***:

ուրուագրին Հայկայ», բայց լուծ էի ուրիշ
 սեփականաց ցաւ մը մեր ծերունիներուն՝ «Խըմ-
 բազիր ընդարձակ թերթնդական արուեստի»
 ետահատոր երկին կորստեան վրայ: Սոյն
 չքնաղ գործին մէջ՝ Բագրատունին թերթ-
 զական արուեստին օրէնքներն աւանդելով,
 իբր օրինակ անոնց՝ բոլոր հին յոյն քնարեր-
 զակ թերթողները, Պինդար, Անակրէոն, Սապ-
 փով, և այլն, թարգմաններ ու ազուցներ է
 ինկածըով. գործ մը՝ որուն նմանը և ոչ
 ինկաւ եւրոպական ազգաց մէջ կը գտնուի. և
 սակայն ժանտաժուտ կրակն՝ որ բան է մ'այ
 չի պատկառիր և չի ինայնի, կ'այրէ կը լափէ
 միւսներուն հետ այն բազմամեայ զրտանց
 պատուի ալ, ի խոր սուգ ընկղմելով Հեղի-
 նակը, և իրեն հետ մեր՝ նոյն ատեն երի-
 տասարդ՝ իսկ այժմ՝ ծերունի Հայրերը, որոց
 ափսոսանքը լսել և չզգացուի՝ կարելի չէ:
 Շատ փորձեր փորձած են իր աշակերտնե-
 րը՝ կրկին ձեռք զարնել տալու նոյն թան-
 կազին երկին, բայց Բագրատունին՝ սիրաբ
 կտորած, յոգնած, և ծերացած ըլլալով, չէ
 յանձն առեր կրկին կարել անցնիլ այն եր-
 կայն ճամբան, ու իբր յիշատակ անոր՝
 թարգմաններ է Որատորսի «Արուեստ թեր-
 թողական»ը, որ Կիրգիլի «Մշակական»աց
 հետ լոյս տեսած է:

Վանքին մէջ ուսուցչութեան ժամանակ՝
 զարգացուցած է Բագրատունին Եօրընծայա-
 բանի Թատրոնը¹, թէ հանդէսներու յօրի-
 նուածին, թէ ձեւին և թէ արտասանութեան
 տեսակէտով. և այլ և այլ անուանի թերթ-
 զաց ողբերգութիւնները՝ թարգմանաբար յե-
 բրելիլ յետոյ, յօրինել է և ինքն լրբուսան-
 Բ. ողբերգութիւնը³, որուն՝ տարիներ յետոյ

չհանելով կը պատել և կը հրամայէ կրակ
 ձգել. բայց իր աշակերտները՝ տեսնելով ող-
 բերգական արուեստի թերթնդական հետ մէկ-
 տեղ, մեծամեծ գովելի յատկութիւններ եւ,
 և ամէն բանէ աւելի չքնաղ Հայկաբանութիւն,
 իմաստալից և վառվռուն շարադրութեան զե-
 ղեցիկ ոճ, ոչ միայն չեն կատարեր անոր
 հրամանը, այլ նոյն իսկ այն պատատ պա-
 տառ կցկտոր մասերը ինքնաբոլ իրարու ըով
 գերելով՝ Հեղինակին լռելեայն հաւանու-
 թեամբը՝ կը տպագրեն զայն. և կը լսենք
 իսկ մեր ծերունիներէն, որ Գերպ. Գևորգ
 Հիւրմիւլ՝ սոյն ողբերգութեան լեզուն՝ Բա-
 գրատունւոյն արձակ շարադրութեան հրա-
 շակեալը կը համարի եղեր:

Թիշնք Բագրատունւոյն վերջին երկն ալ:
 Կարծես ձանձրացած մուսաներու կանտոց-
 ներուն մտիկ ընելէն, և յոգնած Ոլիմպոս,
 Պանասոս և Հելիկոնս լերանց գագաթանց
 վրայ ճեմելէն, պահ մը հրաժեշտ կու տար,
 աւաղ և յետին, անոնց, և թերթողական և
 ճարտասանական ղէզ ղէզ ընտիր ընտիր
 գործոց ըովը՝ փափաք կ'ունենար բարձրա-
 ցնել ուրիշ ղէզ մին ալ՝ պատմականին, և
 ձեռք կ'անէր կեստուն Գալլիական պատե-
 յագմիկ յիշատակարանը. բայց անուղ-
 բելի մահը՝ զեռ թարգմանութիւնը շաւար-
 տած՝ կը կորզեր անխոնջ ձեռքէն զրիշը,
 խեղդելով այն օգտակար փափաքը հազիւ
 ընձիւղած: Բագրատունին անոր շարունա-
 կութիւնը, իբրև կտակով, կը յանձնէր իր
 ամենէն աւելի քաջ աշակերտին՝ Գերպ. Գ.
 Հիւրմիւլեանին, որ ի ժամուն Աբրահայր էր
 Ռիտոսի, որպէս զի պակասաւոր շմայ իր
 այն վերջին աշխատութիւնը, բայց իր ա-

1. Սոյն Թատրոնը՝ որ հարիւր տարիէն ա-
 ւելի կեանք ունեցած է, և ուր խաղցուած են
 ընտիր ողբերգութիւններ և զաւեշտներ՝ որոնց-
 մէ ոմանք ապուած ալ են վազմակիպ պրակ-
 ներուն մէջ, 30-53 տարի է որ դադրած է. և
 այժմ միայն կը շարունակուին Ծննդեան և
 Բայտնութեան հոգեւորգութիւնները, զորս՝
 նորընծայը կ'արտասանեն՝ ի լուր Միւսանու-
 թեան, ճարտար Վարդապետներու ձեռքով ձե-
 ապուած Բեթղէնի մէջ այրի մը առջեւ:

2. Այս ողբերգութիւններէն են՝ Արտաշէս,
 Երվայնաձեն, զոր յերիւրած է Մեթասթա-
 սիոյէն (տես Բագմ. 1879. Լէ. 23, 123): —
 Արտոնդոս Հանգոչոս, նոյնպէս Մեթասթա-
 սիոյէն. (տես Բագմ. 1871. Իթ. 29, 59, 126,
 214): — Մ'ան կեսարտա, Վըլշեուն, (տես
 Բագմ. 1870. Իթ. 31, 61, 92, և այլն): —
 Կատուն Ոստիկեցի, Մեթասթասիոյէն, անտիպ:
 5. Տես Բագմ. 1869. Իլ. 47, 86, և այլն:

բուեաստին անմահն թարգմանութեամբ չկար-
կատուի, ինչպէս կ'ըսէ նոյն գրոց յառաջա-
բանը: Վարժապետին փափաքը կատարելու
համար, աշակերտը յանձն կ'անէր՝ «ի
հոյս հոգոց և վաստակոց» որ ըստ կարգի
պաշտամանն և որ ըստ բերմանց ժամանա-
կին, և զտանէր հուն թարգմանելոյ և աւար-
տելոյ զգիրս, հաստարգրատ փորձ և առոյց
զբշւա՝ Սկրանողին՝»:

Ինչպիսի՞ չքնաղ գործեր կրնար ակնկա-
լել հայկական զպրովիւնը Գրոնէյի Պո-
լիկտուսին ճարտար թարգմանչէն, Ռօլենի
հնախօսութիւններն հայացընողէն, և այլն²,
եթէ սոյն ծանր պաշտօնը՝ չնչնէր անոր ու-
սերը. պաշտօն մը՝ որ ստանձնողին ձեռքէն
զբիւր կը յափշտակէ:

Աբաւներու շարքին մէջ անոնք՝ որ մասե-
նագրական ահուն մ'ունին այսօր, ապահովա-
պէս վաստակած են զայն Աբալյութենէ առաջ,
երբ նմանօրինակ տեսչութեանց կամ ծանր
պաշտօններու չին կաշխատելուած. կամ եթէ
վերջն ալ, բայց բոլորովին տարբեր պայ-
մաններու և ժամանակի մէջ:

Անցնինք հիմայ Իլիականի թարգմանու-
թեան: Ամենայայտնի բան է որ թարգմա-
նութիւն մը ինչպէս որ պէտք է ըլլալու հա-
մար, հարկ է թարգմանիչը տէր ըլլայ թէ
այն լեզուին որմէ կը թարգմանէ, և թէ ա-

նոր՝ որուն կը թարգմանէ: Այս պայպէս ըլ-
լալով հանդերձ, երբեմն կը պատահի որ
ակնկալուած յաղորդութիւնը չ'ունենար թարգ-
մանութիւն մը. պատճառ. «Ձի բաղում ան-
գամ, կ'ըսէ՝ Բագրատունին, որ ինչ գեղե-
ցիկն է ի լեզուի միում, յայլ լեզու հաննալ՝
ոչ զնոյն տիպս չքնաղ կերպարանաց յան-
ձին երեւեցուցանէ. ոչ զիտեմ ի թարգմա-
նութեանն յանցանաց, եթէ յազգին և ի
բարբառոյն բնաւորութենէ»: Չեմ կարծեր՝
որ Բագրատունին իր թարգմանութեանց վը-
րայ տեսած ըլլայ սոյն անյաշողութիւնը,
վասն զի անմիջապէս կը յարէ. «Այլ եթէ
չէր մեզ յոյս ազատ ի թշուառութենէ աստի
լինելոյ, և ոչ իսկ յանձն անուաք միել
ի թարգմանութիւնս, թող թէ ի լոյս զայն
ընծայել»: Այս խօսքերը կ'ըսէ Մշակակա-
նաց յառաջարանին մէջ. և ոյ՞ որ կարգա-
ցած է կամ կը կարգայ այդ սկիզբինիկ
թարգմանութիւնը, ակնբերս կը տեսնէ, որ
Բագրատունին խարուած չէ իր ակնկալու-
թեան մէջ. իսկ Իլիականի յառաջարանին
մէջ կ'ըսէ, թէ «... յանձն առաք զիջա-
նել՝... նորոգ յերդու ի հայ զիլիականն...
նովին հելլենացի հին պարզութեամբ և բնա-
կան ճշգրտութեամբ բնագրին ըստ կարի լե-
զուիս և շափոցս. կամ թերեւս ասելի իցէ՛
ըստ մերուս կարի, որ իցիլս թէ առաւելեալ

1. Յառաջբան՝ Կեսարու Յիշատակարանաց:
2. Գերբայ, Գերբզ շէրմուղեան եւս մաս ու-
նի հորքնձայարանի Թատրոնին զարգացման՝
իւր վարժապետէն ետքը: Այլ և այլ ուղբեր-
գութիւններ և դաւեշաներ յերբերած է, յորոց
ոմանք տպուած են Բագրմակիպին մէջ: Ասանցմէ
են՝ Թեմիստոկիէս ուղբերգութիւնը՝ զոր յե-
րբերած է Մեթասթասիոյէն. և որ՝ Պէշիկ-
թաշլեանի խնդրանօք՝ յղուած և խաղցուած
է Միջագիւղի Թատրոնին մէջ (տես Բագմ.
1886, ԽԻ. 121, և այլն): Իսկ կատակերգու-
թիւններէն՝ Երկոտորեակը (Բագմ. 1847, Ե.
47), Հնախոյց (1837. ԺԵ. 17), Հրիտակակա-
տար (1856. ԺԻ. 18), և ուրիշներ՝ որ անտիպ
կը միան՝ ուրիշ դէպ մը ձեռագրաց հետ:
3. Յառաջբան՝ Վերգիլի Մշակականաց. էջ 9:
4. Մանօթ է բանասիրաց, որ Հովերի թէ Խ.

լիականը և թէ Ողիականը արդէն վաղուց
յանգաւոր թարգմանուած էին. թարգմանու-
թիւններ՝ որ իրենց յարգն սենցեր են ժամա-
նակին և ունին, և արճամարհելի աշխատու-
թիւններ չեն. և որովհետեւ անոնց թարգմա-
նիլը՝ Հ. Եղիս Թովմանեան՝ Բագրատունեայն
վարժապետն էր, երախտագէտ և հանճարեղ
աշակերտին ծանր կու գար ստանձնել զեր մը՝
որուն մէջ զուցէ իր վարժապետին համարու
նսեմանար, և ի հեռեւեկ հասարակաց առա-
ձին՝ աշակերտը զերագանցէր քան զվարժապե-
տը: Արդ զիտնալով՝ Բագրատունեայն երկակի
կամքը, կրնանք հետեւցընել թէ որչափ քրտնած
զիտի ըլլայ զինքն համազորը՝ սոյն անմահն
թարգմանութեան ձեռք զարնել տալու համար
(Հմտ. Բագմ. ի Յունուարի պրակին մէջ (էջ
26) Երկու նամակներ):

լինը»։ Իլիականը կարգացողը՝ այս սողե-
րուն զբայ զարմացած՝ պիտի ըսէ, թէ այս
մարդը զեռ ինչ կարողութիւն կ'ուզէ. մարդ
մը, որ իր սարնտուին¹ կաթին պէս ծծեր
է յունարէն լեզուին և մասնակարգութեան
ուղեւորը. բոլոր մեր նախնիքը՝ չորրորդէն
մինչև երկուսասաներորդ դար՝ բոսանա-
մեայ անբնական և անխնջ Հնասագոսու-
թեամբ՝ իւրացուցեր է, անոնց գանձերն
յինքն շտեմարանելով. և իբրև ի նախնեաց
մէկը, կամ թէ ըսեմ՝ անոնց ամենուն ի
միտան ի մի ձուլումը, «յինքնէ, իբրև
ի բուն աղբրէ՝ ըղիւէ յինքնուրոյն տրպս
կերպարանաց»։ Միթէ մարդկային հան-
նարը և թարգմանութեան արուեստը՝ կա-
տարանն են ասկէ աւելի չընազ գործ մը,
կամ պիտի կրնան կատարել։

Սյուպիսի ծայրախիբ հմտութեամբ կա-
տարուած թարգմանութեան մը գեղեցկու-
թիւնները՝ բնական է որ իր բնագրին գե-
ղեցկութեանց չափ անսպաս ըլլան. և ինչպէս
բնագրին՝ նոյնպէս և թարգմանութեան հա-
մար հաւատար կը զօրեն Քաղաքատունւոյն
այս խօսքերը, թէ և . . . առ ի ցննութեամբ
Հասանելոյ ճշդիւ գտակաւ յամենայն ի խոր
նորա Հանձարոյն, պէս պէս գեղեցկութեանց և
թաղան զիտելեաց, և իրականց բայից և բա-
նից թարգմանութեանն, երկարայաւէտ ճա-
նից պէտք են, նա մանաւանդ մատենից. զործ՝
ուճ և իցէ զիրագիւտ առ մեռք, բայց տար-
ժանաւոր՝ անսպաս և ոչ ամենեցուն ինչ առ
ի պէտս պտտկանաւոր և կարեւոր»²։ Բա-
ղաատունւոյն խօսքերուն Համաժիտ եմ, բայց
հայերէն թարգմանութեան պէսպիսաբար ճար-
տար զանազանութիւնը՝ ինչպէս իստասացեր
էի՝ ցուցնելու Համար, հարկ է մտուիմ այդ
տաժանաւոր գործին մէջ, ու բաղեմ իբր
նմոյշ քանի մը օրինակներ, զնելով նաեւ
անոնց յունարէնները։ Առ այժմ տեսնենք
թէ ինչպէս կը կերտէ Քաղաքատունին բար-
դութիւնները։

1. Իւր ինքնազիր վարքին մէջ կը գրէ Քա-
ղաքատունին. « Եւ զտուայն զինքը՝ երբորդ զէմ-
քով կը խօսի» սեւեւանեն կաթմաբ յոյն սանտուի
զամս երես վասն մարմնայն սնօսութեանն։ Եւ

Սկիհնք նոյն ինքն Արամազդէն՝ աս-
տուածներու հօրմէն։

Արամազդ անունը՝ յունարէն Ζεύς, կը
գտնենք Արամազդ, Արմազդ, Ռրմիզդ, Չեսս
ձեւերուն տակ, որոնց համանիչ են նոյնպէս
Դիոս, Զրուանեան, Զրուանայ ձեռ, Ոլիմ-
բեան, Ոլիմպականն, և այլն, ձեւերը, ու-
րոնք ունին իրենց յունարէնները։ Արամազդ՝
Իլիականի էջերուն մէջ ստեպ կը ներկայա-
նայ՝ այլ և այլ վերադիւրներով. տեսնենք
անոնցմէ մէկ քանին Քաղաքատունւոյն մն-
գական գրչին տակ.

Νεφεληγερέτα, բառը կը թարգմանէ Քա-
ղաքատունին անպրոպայիէ (Ա. 514), ան-
պայարոյց (Գ. 30, և այլն), անպրոպակ
(Է. 230), անպահոտակ (Ը. 38), ան-
պրոպարեր (Ը. 469). անպրոպայոյց (ԺԱ.
318)։

Αίγλοχος. զանաւակիր (Ժ. 278), զա-
հանաորոջ (Ք. 157), անպարակիր (Ա. 202),
անպարակիր (Է. 60), անպարակէն (Ք. 375),
անպարոյ (Գ. 426), անպարակերձ (Ը.
352), անպարափառ (ԻՔ. 218), անպա-
րաւոր (Ա. 222), և այլն։

Εδύοπα. անկազու (Ա. 498), որոտա-
նայն (Ը. 206), անկախառնէ (Ք. 419),
որոտազու (Ը. 442), որոտող (ԺԷ. 542),
և այլն։

Υπερμενής. գերագոր (Ք. 116), անե-
կագոր (Ք. 403), անկազու (Է. 481),
մեծագոր (Ք. 23), հզոր (ԺԿ. 727), և այլն։

Ἐρίγδουπος. որոտընդոտ (Է. 673), ա-
հագազու (Է. 411), որոտարեղ (Ժ. 329),
անգագարեղ (ԺԳ. 83), և այլն։

Τερπικέραυος. փայլակագոտարձ (Ա.
419), շանբագոտարձ (ԺԳ. 231), և այլն։

Ἀργυκέραυος. շանբրկեղ (Ի. 16), կա-
ժակեացու (ԻՔ. 751), կայժակեացոյտ,
շանբախազաց, շանբաձիգ, և այլն։

այս թերեւս իցէ ներկական պատճառ հելե-
նասիրութեան նորա մինչև ի սպառ»։

2. Քեր. ի պէտս զարգաց. էջ 629։
3. Յառաջ. Կլիտականն։

**Անցնինք Հերայի, Արամազայ հարա-
զատին և ամուսնոյն.**

Λευκόλεος. թասազի (Ա. 55), սպի-
տակազի (Ա. 208), թասարեւ, և նոյն բա-
ռը թարգմանուած նսեւ ճիւղակառէ (Պ. 121):

Πότνια. վեհապատիս (ՃԳ. 222), մե-
ծապատիս (263), արգոյ (329), մեծարեղի
(ՃԵ. 49), գերամեծար (ՃԲ. 353), մե-
ծարոյ (ՃԳ. 174), մեծաշոք (ՃԳ. 243),
շքեղաշոք (ՃԵ. 34), պատկանելի, և այլն:
Պոսիդոն՝

Ἐνοσίχθων | երկրատատան (Է. 445,
Ἐνοσίχθων | ՃԳ. 43), երկրատատան
(ՃԱ. 751, 677), երկրաշարժ (ՃԵ. 218),
երկրադողոյ (Ը. 440), գետնադողոյ (ՃԳ.
90, ՃԳ. 135) գետնատատան (ՃԳ. 59),
գետնատատան (Ի. 315), և այլն:

Γαίηςχος. աշխարհակալ (ՃԳ. 43), եր-
կրալի (59), երկրակալ (83), երկրապար-
փակ (125):

Հելատո՝
Κορυθαίολος. սադռաարտաւած (Պ. 83),
կորդակահարիստ (Ե. 686), սադռաարտա-
խարիստ (Զ. 520), կորդակաւած (Զ. 342),
և այլն:

**Արայեցիք: Արեանք, Արայիկք, Արդս-
ասցիք, Արդիացիք՝**

Χαλκοχίτων. պատենակե (Բ. 47),
գիւակգիւտ (163), պղնձալիս (187),
պղնձագգիւտ (Պ. 131), պղնձակե (251),
պղնձապատ (Ը. 71), պղնձակոշտ (ՃԳ.
272):

Κάρηκομῶντες. հերպաւեծ (Բ. 11),
վարսագեղ (28), գիւակգեղ (51), գան-
գառարագեղ (443), վարսադողոյ (Բ. 323),
վարսառեղեղ (Պ. 43), ցիւառար (Ը. 510),
գիւակգեղ, գանգարագեղ, գեղագանգար, և այլն:

Ողիսեւ՝
Πολύμητις. լիսեւեւար (Պ. 200), բազ-
մակեւեւար (216), հակեւարեղ (Պ. 349),
հակեւարալատ (Ճ. 423), մտահարուտ (Ճ.
554), իմաստագեղ, և այլն:

**Տեսէք, ընթերցողք, հումանիշներուն
գեղեցկութիւնը և բարդութեանց ճարտար
արուեստը, և միանգամայն հայերէն լեզուի
ճոխութիւնն ու փառքը, որ քաղաքատունից
հրաշագործակ գրչին տակ կը փայլատակեն:
Կը պարծինք որ հայերէն լեզուիս վեճմ
ու հարուստ է, բայց ճարտար գրիչներու
միայն արուած է մեր լեզուին այս շքնազ
յատկութիւններն ի լոյս պարզել: Վասն զի
թէև գիտե՞նք, որ «թարգմանութեան է նո-
բանոր գանձս ճոխութեան բերել յաւերույ
յազգաց ազգաց օտարաց ի բնիկ փարթա-
մութիւն հայրենի լեզուին՝». բայց գիտե՞նք
գարձեալ, և անհրաժեշտ է որ թարգմանու-
թիւն մը «ի գրիչ ճարտար գիպիցի», վասն
զի, այն ատեն միայն, թէպէտ լեզուիս
վեճմ՝ և հարուստ, «ի վերայ ամենայն
հարատեւեան իւրոյ ոչ արհամարհէ, ոչ
խոժոռի ընդունել սիրողաբար որ ինչ և մա-
տուցի նմա յազգասէր նախանձու՝ ոչ յա-
խուռն բարեբարեղ կարծեցելոցն, այլ ի իս-
հական և ընտրող հայրենասիրութենէ ճար-
տարաց, որ ոչ եթէ գրնիկ գեղ ազգային
բարբառոյն աղաւաղել, այլ պննել և անճ-
ցուցանել զայն խնդրիցեն» . և կամ, ինչպէս
ուրիշ տեղ² մը կը կարդանք, այդ բառ կեր-
տելու կամ բարդիւտ մարմաշը չըլլայ
«... առ հեղուութենէ ինչ, անհմտաբար և
ստամբակերէն նորասիրութեամբ, առ նորա-
ձեւութեան և ստրկարար նմանողութեամբ
կամ հետեւողութեամբ խթիլ խծիկել ... զի
մի ազգասէր լեզուասիրացն և ի հարկին
կապեցին ձեռք առ զգուլութեանց» . Իր այսօր,
որչափ բառեր կամ բարդութիւններ կը տես-
նենք՝ կերտուած հեղուութեամբ, անհմտու-
թեամբ և նորասիրութեամբ. բառեր՝ որոնք
իրենց անշնորհք կազմուածքովը ո՛չ միայն
չեն պննել մեր լեզուն, այլ կ'աղաւաղեն
և ծագրելի կ'ընեն:**

Արդեօք պիտի գնայ այն օրը որ մեր ազգն
ալ՝ նման Եւրոպացոց՝ կարեւարութիւն տայ
այսպիսի գործերու, և կարենայ տպագրուիլ ա-

1. Յառաջարան Վերգիլեայ Մշակականաց.
էջ 9:

2. Սոսուէ. Արտեւտ բանական. էջ 301:

ռանձինն Հոսիբի բաղադրք մը՝ այս սքանչելի բառերով, և ոչ միայն այս, այլ և Բազրատունւոյն բոլոր գաղղ. Թարգմանութեանց բառերը, նոյնպէս լատիներէնները ու իտալերէնները զորս հաւաքած ունինք:

Առ այժմ այսչափս բաւական համարելով յատուկ անուանց վերաբերեալ հոմանիշնե-

րէն՝ որոնց նման զեռ անհամար թուով կը գտնուին իլիակահին ամէն մէկ էջին մէջ, բանանք Բ Երզը, և տեսնենք թէ սեռ նաւերը ինչ տեսարան կ'ընծայեն մեզ:

Հետեւեալ տարբ տողերուն բնագիրը միշտ նոյն է, բաց ի վերջին երեք տողերուն նաւերուն թիւէն. դնենք ինչպէս սուր մը.

Τὸ δ' ἄρα τερσάρακοντα μέλαινα νῆες ἔποντο (Ռ. 545)
Քառասուն մար և սրմա գնայիմ ըզնետ թըխտտեսակք (545)
Ընդ սրմա սեւորակի վարեալ գնայիմ մարք քառասուն (690)
Նւ սրմա քառասամթիւ գնայիմ ըզնետ մարք սեւորակք (710)
Նւ ըզվմի իւր սեւաթոյր ամցամէիմ մարք քառասուն (644)
Նւ սոցա մարք քառասուն թըխտտեսիլք գնայիմ ըզնետ (747)
Նւ սորա թոյրաթիւն ըզնետ գնայիմ մարք քառասուն (737)
Ոյր ըզվմի երթայիմ քառասմեհրակ մարք սեւամեհրկք (759)
Նւ ըզտորիմ մարք յիսուն սեւաթորմիք գնայիմ ըզնետ (556)
Նւ ութսուն ըզոցա գնայիմ ըզնետ սեւա լատափայտք (568)
Նարք ութսուն ընդ սոսա հիտիէիմ սեւատեսակք (652)

Հետեւեալ Հինգ տողերուն բնագիրն ալ | գրեթէ նոյն է, ոչ ինչ փոփոխութեամբ.

Նւ սոցա մարք երեսուն զոզեայք՝ կարգեալ ըմթամայիմ (Ռ. 516)
Որում մարք իորամէջք իմընտերեակ գիտ կարգէիմ (802)
Ոյց ըզնետ երեսուն զոգում քաշտիք գնայիմ տողայք (680)
Նւ սոցա երեսուն գնայիմ ըզվմի մարք զոգաւորք (733)
Նարք ըզնետ սորա գնայիմ կարմրածըծտք երկոտսամ (637)

Տեսէք, ընթերցողք, նաւերն Բնչպէս կը ցատկոտեն Բազրատունւոյն հրաշագիծ ու ճապուկ զրչին տակ, ինչպէս թէ փղոսկրէ մէկ մէկ գնդակներ ըլլային՝ որ կ'ոտտոտեն կուճ աւելայտակի մը վրայ: (Սոյնպիսի տեսարան մը կ'ընծայէ մեզ Բազրատունին Հայկ Դիւցազնի Բ. երգին մէջ, նկարագրելով Հայկայ զորաց հանդուր, ոք՝ նաւերու տեղ՝ սպառազն գունդերն ու վաշտերն են որ կ'անցնին): Եւ զեռ նաւերուն այն սքանչելի հոմանիշները, զոգոսն, զոգաւոր, զոգեալ, զոգաձեռ,

խորագոգ, խորափոր, խորամէլ — երագարեռ, երագարթիւ, երագաձեպ, արարչառ, սրբեքաց, սրբերացիկ, ձեպըբքաց — ժովաչառ, ժովաչաժռակ, ժովաներձ, ժովագեաց, անդրեղաչառ, անդրաներձ, և այլն, և այլն: Հիմալ տեսնենք թէ Բնչպէս իրարու հետ խօսիլ կը սկսին աստուածներն ու դիցանոյշներն. ահա բնագրէն տող մը՝ որ միշտ միեւնոյնն է յիշուած տեղերը, և Բազրատունւոյն զարմանալի զրչին տակ տասնեւիցե տեսակ փոփոխութիւն կը կրէ:

Καί μιν φωνήσας ἔπειτα περσέοντα προσήδα (Ո. 201)
Նւ առ մա քարթառեալ զիրագաթիւ արձակեաց ծայնս (Ո. 201)
Նւ առ մա ծայն արարեալ՝ երագաթիւ ստէ բամիւք (Ռ. 7)
Նւ առ մոսա ծայնարկեալ՝ երագաթիւ իսոնցալ բամ (Դ. 284)
Նւ արձակեալ առ մա ծայն՝ թրուում բամիւք քարթառեցալ (Դ. 312)
Նւ առ մոսա ծայն եղեալ՝ իսոնցալ բամ երագաթիւ (Դ. 337)
Նւ առ մոսա քարթառեալ ըզրագաթիւ բամըն իսոնցալ (Դ. 369)
Նւ ծայնարկեալ առ մոսա քարթառեցալ երագաթիւ (Ժ. 191)
Նւ առ մա կարդացեալ քարթառեցալ երագաթիւ (Ժ. 163)
Նւ առ մա քարթառեալ ըզթեւաւոր իսոնցալ բամ (ԺԵ. 88)
Նւ առ մոսա քարթառեալ զիրագաթիւ իսոնցալ բամ (ԺԵ. 148)
Նւ առ քարթառեալ առ մա բամիւք թեւաւորք (ԺԶ. 6)
Նւ քարթալ առ մա ծայն՝ քարթառեցալ ըզթրուում բամ (ԺԸ. 74)
Վարդաց առ մա և ստէ յիրագաթիւ ծայնի քարթառ (Ի. 327)
Նւ առ մա քարթառեով ըզրագաթիւ իսոնցալ բամ (ԻԱ. 72)
Նւ արկեալ առ մա ծայն՝ զիրագաթիւ ըզրամս ստէ (ԻԳ. 617. յուն. 625)
Նւ ծայնեալ՝ երագաթիւ քարթառեցալ առ մա բամիւք (ԻԴ. 515)

Եւ զեռ ուրիշ գրեթէ այսչափ տողեր, ու | բոնց մէջ կամ՝ յատուկ անուն մը կայ և կամ՝

φονήσασθην *սեղ՝ զոր օրինակ լստալմենդ (կա-
ցեալ առ ընթեր, առ նմին) կամ օմբեծόμενος
(տուեալ պատասխանի), և այլն, և բոլորովին
տարբեր կերպով թարգմանուած յիշատա-
կուած տողերէն:*

*Հիմայ տեսնենք թէ ինչպէս կը սփբին
աստուածուհիները կամ դիցազոներն Արա-
մազդի և այլոց որոտումներէն: Դեհներ բնա-
զրէն տող մը:*

- Պճ էփած՝ օի Ծ'օրա քանտե օնդն Երնօնտօ օտօքի. (Գ. 95)
- Ասաց զայս, և կարկեալ կացիմ լրոնի առ հասարակ. (Գ. 95)
- Զայս ասաց, և նորա լուռ կարկեալ կացիմ քոյրերքան. (Է. 92)
- Զայս ասաց, և լուռ սմմուռնէ կարկեալ կացիմ ամենքեքան (Է. 398)
- Զայս ասաց, և նորա պապամծեցամ տաճասարակ (Ը. 28)
- Զայս ասաց, և նորա լուռ մուռ համրացամ քոյրերքան (Ժ. 313)
- Զայս ասաց, նորա կարկեալ պապամծեցամ տաճասարակ (Յ. 29)
- Զայս ասաց, նորա լուռ և լեզուակայս կարկեալ կացիմ (Ք. 430)
- Զայս ճառեաց, նորա լրոնի պապամծեցամ տաճասարակ (Ք. 693)
- Զայս ասաց, և լուռ կարկեալ կացիմ նորա քոյրերքիմ (Ժ. 218)
- Զայս ասաց, և ամբըռուռնէ պապամծեցամ ամենքեքան (ԻԳ. 679):

*Կրնանք ըսել, ընթերցողք, թէ որն է ասոնց
մէջ ամենէն ընտիր տողը. ո՛չ այսպէն իւ-
րաքանչիւր տող ասունքինն՝ արուեստի, ներ-
դաշնակութեան և անհամեմատ Հայկաբա-
նութեան միաձայն գանդուած մըն է. հայե-*

*րէն լեզուին փառքն ու պարծանքը և շնորհք
չէն ցուցընքը մէջ բերուած տողերը: Հիմա
տեսէք թէ լրողներն ինչպէս կը հնազանդին
Արամազդայ կամ այլոց. դեհներ նորէն բնա-
զրէն տող մը:*

- Պճ էփած՝ օի Ծ'օրա տօմ մալա մեն քնօն. յի՛ Երնօնտօ (Է. 397)
- Զայս ասաց, և նորա յոյժ լրուայ հնազանդ եղեմ նրմա (Է. 397)
- Զայս ասաց, և հրուարար հաւամ եղեմ նորա նրմա (Ք. 79)
- Զայս ասաց, և ունիմ եղեալ նորա մտազիւր հաւամ եղեմ (ԺԴ. 133)
- Զայս ասաց, նորա լրամ և ամսացիմ նրմա մտազիւր (ԺԵ. 373)
- Զայս ասաց, նորա սիրտիւ լրամ նրմա և ամսացիմ (ՅԵ. 300)
- Զայս ասաց, և մրտադիր լրեալ նրմա հաւամ եղեմ (ԻԴ. 54)
- Զայս ասաց, և ունկընդիր յայ նոցս յոյժ՝ հնազանդ եղեմ (ԻԿ. 730)

*Քանի մը տող այլ դեհներ ու տեսնենք թէ
թագաւորք ինչպէս կը քաջայերեն իրենց*

*զինուորները. ահա յունարէնէն տող մը,
որ միշտ նոյն է.*

- 'Anéress éoté, φίλοι, μνησασθε εὐε θεούριδος ἀλαχῆς (Զ. 112)
- Արքս լերուք. սիրիլիք. արկէք ի միտ զոյժ պրնդուիթեամ (Զ. 112)
- Քաջ լերուք. սիրեյիք. և դէք ի մտի գարիութիւմ (ԺԱ. 287)
- Լիբուք արք, սիրիլիք, բրանսխոյեամ յուշ ձօզ կորով (ՅԺ. 183)
- Լիբուք յարքս. սիրիլիք, յուշ ժիր աշխոյժք... (ՓԵ. 734)

Դարձեալ և այս տողերք.

- Լիբուք յարս. ո՛վ սիրիլիք, և ի միտի դիջիք գամթ (ՅԵ. 661)
- Քաջ լերուք. ո՛վ սիրիլիք, գմարդկան ի միտ արկէք գամթ (ՅԵ. 661)
- Լիբուք արք, ո՛վ սիրիլիք, և զգեցարուք սիրտ գորութեամ (Ի. 529)

Դարձեալ՝ ուրիշ տողք.

- Պճ փօտօ՝ տի Ծ'օրա օթումն Ենի տյիճեսսն օրոն. (Գ. 396)
- Զայս ասաց և զգիբրտ նորա ի լամջրս իւր արծարծ (Գ. 396)
- Զայս ասաց և զսիբրտ նորա ի լամջրս իւր վրդողվեցոյց (Գ. 206)
- Զայս ասաց, և զսիբրտ նորա շարծեալ ի լամջրմ յուրորէր (Զ. 51)
- Զայս ասաց և թրնդեցոյց զգիբրտ նորա ի լամջրս իւր (ՃԱ. 804)
- Զայս ասաց, և ի լամջրս նորա զսիբրտմ թրնդեցոյց (ՃԳ. 468)
- Որ և յայմամ զգիբրտ նորում ի լամջրմ բորբորեաց (ՃԶ. 690)

Դարձեալ ուրիշ.

- Պճ Եթուն, նորոնս մենոց քալ օթումն Եւչոտոս (Ե. 470)
- Ասացեալ քաջալիրեաց զոյժ և զեռանդմ իւրաքամչիւր (Ե. 470)
- Զայս ասացեալ զարթոյց զոյժ և զգիբրտ ամենցումն (Ե. 792)
- Զայս ասաց. և Խաւմղմ յամենիւիմ ամ և աշխոյժս (Զ. 72)

Յայս բարբառ կազդուրիցոյց պրնդիաց զմմուրց զոյժ և զոգոն (ժԳ. '55)
 Չայս ստաց և արծարծ զոգոն և զոյժ բոլորեցում (ժԵ. 500)
 Չայս ստացեալ յարոյց զոգոն ամենեցում և զգորութիւմ (ժԷ. 514)
 Չայս ասացեալ ընդոստոյց զոգոն և զմիտս ամենեցում (ժԸ. 666)
 Չայս ստացեալ մոզացոյց զամենեցում զոգոն և զոյժ (ժԹ. 210)
 Բարբառեալ զայս՝ նոսոյց զամենեցում սիրտ և զկորով (ժԺ. 274)

Այս և ստոնց նման մոզական սողերը կարդալով Բագրատունւոյն (քեֆը) կու գայ եղիք ըսինք. արդեօք ընթերցողներուն ալ չի՞ գար, սիրտերնին ալ մտքերնին ալ չճն արծարծիր: Ինչ ճոխութիւն գալափարաց, Ինչ եռանդ ու բոց՝ որ կը շնչէ սողերուն. հոմանիշներու շտեմարան մը՝ որ սպանու լիք շունի. միտք մը՝ որ կը ստեղծէ, շարունակ կը ստեղծէ, և զարմանք, բոլոր մէջ բերած սողերուս մէջ՝ կարելի չէ գտնել երկու հատ՝ որ իրարու նմանին, ամէնքն ալ իրարմէ տարբեր, մի քան զմի գերազանց: Կերանք արդեօք դիպուածին առաջ այսչափ սողերու իրարմէ տարբերութիւնը. ինչ կը թուի թէ ոչ. այլ թէ մասնատր ուշադրութիւն գրած է Բագրատունին, ինքը՝ որ ամբողջ Հոմերոսը բերնուց գիտեր, և այն ինչ սողին կամ բառին որ էջը և կամ որ խորշն ըլլալն անգամ գիտէր, անոնց հանդիպած ժամանակ՝ նայիւր է նախընթացներուն և անոնցմէ տարբեր թարգմանած, տաղտկալի միաձեւութիւնը վերջընելու համար: Ապա թէ ոչ, կարելիք բան էր, որ իլիականի քսան և չորս երգերուն մէջ ցանուցիր զանուած՝ մեր յիշատակած սողերէն գէթ երկու հատը իրարու չնմանէին: Եթէ իրի մը գաղափարը մարդուս մտքին վրայ ազդեցութիւն ըրած ժամանակ, դիւրաւ չ'իլլեր անկէ, ինչպէս կարելի է, որ Բագրատունւոյն մտքին պէս կայն ու խոր միտք մը չ'իշխէր քսանի մը ժամ կամ որ մ'առաջ կրած ազդեցութիւնը. երբ սող մը երկրորդ անգամ կը պատահի, որուն վրայ արդէն մտածեր ես անգամ մը, բնականաբար առաջին անգամուն պատկերը կը ներկայանայ, և նոյն իսկ կը կապէ կը կաշկանդէ միտքը՝ ուրիշ կերպ չկարենալ ընելու. և ահա միեւնոյն սողը կամ բառը տառը, քսան անգամ հանդիպած կը գտնենք իլիականին մէջ, և ամէն անգամ ալ տարբեր բառերով թարգմանուած, առանց քնազրին իմաստն և ոչ իսկ թեթեւ կերպով

այլալլած տեսնելու: Ամբողջ իլիականին մէջ, որուն մէկ երրորդը՝ եթէ ոչ աւելին՝ կրկնութիւն է, հայերէն թարգմանութեան մէջ հազիւ կարելի է գտնել տառը սող, որ իրարու նմանին ըստ ամենայնի:

է. Ա. ՂԱԶԻԿԱՆ

Շարայարելի



ԳԵՂԵՑԿԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Շար. տես յէջ 567, 1899)

Պ Ը Ա Կ Գ

ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ՈՍՈՒՄԵԱՍՏՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԵՑԿԱՆ

Ընդհանուր ակնարկ բնական գեղեցիկն վրայ. — Տեսանք որ գեղեցիկն տարածանաւոր բարձրացում մ'ունի որ կը համապատասխանէ բնութեան գասաւորութեանց, Բնական է հարցնել թէ կայ այսպիսի բարձրագոյն սկզբունք մը որ աստից ամենուն վրայ տիրէ: Բնութեան վրայ առաջին ակնարկ մը կը ցուցնէ թէ բոլոր անհատները խումբերու կը պատկանին, բայց գիտութեան խուզարկութիւնները կը ցուցնեն թէ այդ նախնական միութիւնները կարեւոր կարգով մը իրարու կը կապուին: Արդ ինչ են այդ նախնական միութիւնը և անոնցմէ կախուած երկրորդական միութիւնները: Միթէ պարզ մեր երեւակայութեան արգիւնք են և բայց մենք չենք զանոնք ստեղծողը: Իրենք կան և զանոնք մենք կը գտնենք միայն և կը ճանչնանք: Եւ ինչպէս կարելի պիտի ըլլար մեկնել թէ ինքնաստեղծ չեղող արարածներ մի և նոյն օրէնքի համառայն, մի և նոյն յատակագծի յարմարուած գտնուին: Արդ եթէ անհեթեթ